ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» մայիսի 2022թ. ՆՄՈ/352-2022

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N690-Ա որոշման 6-րդ կետի պահանջները և Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղարի 2022 թվականի մայիսի 19-ի N04/10.4/3424-2022 գրությունը, «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի Վարչական կենտրոն թիվ 4 հասցեում գտնվող 915.4 քառ. մետր մակերեսով պոլիկլինիկայի շենքի և դրա օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.0818 հեկտար հողատարածքի հանձնման աշխատանքներն իրականացնելու նպատակով

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Հ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին և հաշվապահին (համաձայնությամբ):
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Հ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկամսյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Ս. Թովմասյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

VERIFIED OCSP 5/26/2022 14:51:30 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2022 թվականի մայիսի 16-ի
ՆՄՈ/352 -2022 որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ Հովհաննես Հարությունյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար՝ Արաքսյա Սարգսյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ՝ Սուրեն Սաֆարյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ՝ Ռաֆիկ Սահակյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ՝ Արմեն Դարբինյան:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 26.05.2022 09:49:45 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023